թիւն բէչ կար եկեղեցում։ Տօնի առթիւ խօսեց Վաչ. քահ. Թասարբէկեան։

Եկեղեցուց աշակերտութիւնը և հասարակութիւնը գնաց ծխական դպրոցի թատրոնական դահլիճը, որտեղ տեղի ունեցաւ յոբելեանական հանդէս։

Խօսեցին ուսուցիչներ Արովեան և Քրիշչեան։ Աշակերտ-աշակերտուհիներն արտասանեցին պատշաճ ոտանաւորներ։ Մէջ ընդ մէջ երգում էր քառաձայն խումբը ղեկավարութեամբ ուս. Քրիշչեանի։

Յետոյ աշակերտ-աշակերտուհիները խաղացին մի գործողութեամբ «Դասարանում» մանկական պիէսը։ Վերջն եղաւ հայկական պարեր։

Իսկ երեկոյեան կար նոյն դահլիճում հասարակական հանդէս։ Ուսուցիչները ներկայացրին մի քանի պատկերներ տառերի գիւտի առթիւ։ Այդտեղ ներկայ գտնուողներից ստորագրուեցին յօգուտ դպրոցական ֆոնդի մօտ 150 ր.։ Դահլիճը զարդարուած էր Ս. Մեսրոպի և այլ պատշաճ պատկերներով, դրօշակներով, ծաղիկներով և այլն։

Երկու հանդէսներն էլ լաւ տպաւորութիւն թողեցին ժողովրդի վրայ։

Ս. Կար.

## ԳՐԱԿԱՆ ՖՈՆԴ

Խմբագրութիւնս գրական ֆոնդի օգտին ստացաւ Ռոստովից (Դոնի վրայ) պ. Լ. Վարդանեանից 5 ր., որով նախկին ստացածների հետ միասին ունինք 193 ր. 50 կ.